



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

23.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2019/129

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝
ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Պռո Ինվեստ» ՍՊԸ-ի հիմնադիր՝

Հ. Մուսայելյանի

«Պռո Ինվեստ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Զ. Եղիազարյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 273.110.1040590)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության
25.07.2019թ. թիվ 26/26-1/12458-2019 գրությամբ «Պռո Ինվեստ» ՍՊԸ-ին գնումների
գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու
նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի գեղարվեստի պետական
ակադեմիա» հիմնադրամի 18.07.2019թ. թիվ 160 գրության հիման վրա 25.07.2019թ. թիվ

26/26-1/12458-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պոռ ինվեստ» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պոռ ինվեստ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից հրապարակված թիվ «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, որի արդյունքում հայտերի բացման նիստից հետո 25.04.2019թ. թիվ 2 արձանագրությամբ «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով և սահմանված կարգով ու ժամկետներում ներկայացրել է որակավորման փաստաթղթերը, ինչից հետո 06.05.2019թ.-ին թիվ 4 արձանագրությամբ «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ի ներկայացված 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերում ներառված 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, որի արդյունքում Ընկերության կողմից ներկայացված հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժվել է: Վերոգրյալով պայմանավորված Պատվիրատուն խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, համաձայն որի՝ «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ին պետք է ընձեռնվեր հնարավորություն մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու համար, ընդ որում, ապրանքների գնման դեպքում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված

անհամապատասխանությունները, ինչը չի պահպանվել և փաստացի Ընկերությունը գրկվել է շտկելու հնարավորությունից (իհարկե եթե նման թերություններ առկա էին, որովհետև մինչ օրս Ընկերությունը տեղյակ չի եղել դրանց մասին), հետևաբար «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու հիմքերը բացակայում են, քանի որ «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից ներկայացված պահանջը ոչ իրավաչափ է:

Միևնույն ժամանակ Ընկերությունը հայտնել է, որ ինչ վերաբերվում է նիստի ընթացքում հնչեցվածին, մասնավորապես այն, որ գրություն է ուղարկվել «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամ նշված չափաբաժինների մասով, ինչպես նաև Ընկերության կողմից նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ցույց տրված գրությանը՝ Ընկերության կողմից ստորագրված և կնքված, ապա պարզվեց, որ «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ի աշխատակցի կողմից այն չի ուղարկվել, ուստիև խնդրում ենք հիմք չընդունել գրության մասով Ընկերության կողմից նիստի շրջանակներում հնչեցրած դիրքորոշումը, քանի որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված գրությունը չէր ուղարկվել Պատվիրատուին, հետևաբար և չի քննարկվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Ընկերությունը խնդրել է հիմք ընդունելով Ընկերության կողմից ներկայացված սույն դիրքորոշումը և Պատվիրատուի կողմից իրականացված ոչ իրավաչափ գործողությունները չներառել «Պոռ ինվեստ» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Պոռ ինվեստ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՅ-ՆԳ-2019/129 ընթացակարգի շրջանակներում 01.08.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը և հիմնադիրը ապահովել են իրենց մասնակցությունը:

3. Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամը (հետայսու՝ նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.07.2019թ. թիվ 160

գրությամբ ներկայացրել է «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու հրավույնք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցվաժ լինելով ՍՑ-ՆԳ-2019/129 ընթացակարգի շրջանակներում 01.08.2019թ. ժամը 11:00-ին հրավիրվաժ նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԳՊԱ-ԳՀԱՊԶԲ-19/04» ծաժկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արժանագրության համաժայն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով, առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսվաժ փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.05.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արժանագրությամբ կայացվաժ որոշմամբ արժանագրվել է, որ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվաժ ժամկետում «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվաժ 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերում ներառվաժ 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանվաժ պահանջներին:

4. Նույն արժանագրությամբ կայացվաժ որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2019թ. թիվ 26/26-1/12458-2019 գրությունը, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի 18.07.2019թ. թիվ 160 գրությունը և կից փաստաթղթերը, «Պոռո ինվեստ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հայրերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայրերը, հակառակ դեպքում հայրերը գնահատվում են անբավարար և մերժվում են:*

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի

ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը եկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի,

իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԳՊԱ-ԳՀԱՊԶԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով, առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.05.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2-րդ

փուլով պահանջվող փաստաթղթերում ներառված 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

Այսպիսով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը **հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը**, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, **ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը**, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ **առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից** փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև **ներկայացված՝** ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն **կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը**: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ **առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝**

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Կարգի վերը նշված կետերը հստակ սահմանում են, որ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում Կարգի 47-րդ կետի համաձայն մասնակցին տրվում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

Մինչդեռ, անդրադառնալով գնահատող հանձնաժողովի 06.05.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմքին, արձանագրում են, որ գնահատող հանձնաժողովը վերը նշված արձանագրությամբ արձանագրելով անհամապատասխանություն՝ Ընկերության կողմից Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով չի ծանուցել Ընկերությանը Կարգի 47-րդ կետով նախատեսված մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, այլ մերժել է վերջինիս հայտը և Ընթացակարգի թիվ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներին: Նման պայմաններում գտնում են, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրելով անհամապատասխանություն և չտալով արձանագրված անհամապատասխանությունը

շտկելու հնարավորություն գործել է Կարգի 47-րդ և 48-րդ կետերի պահանջների խախտմամբ:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև Կարգի 46-րդ կետով սահմանված պահանջը, որով սահմանվում է, որ **ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները**, մինչդեռ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտի 6.1 հավելվածում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրելով անհամապատասխանություն հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության մեջ ընդհանրապես չի նկարագրել հայտնաբերված անհամապատասխանությունները:

Գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված է եղել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտականությունները կատարելու հնարավորությունից, ուստի ստանձնած պարտականության չկատարումը տվյալ պայմաններում պայմանավորված է եղել Ընկերության կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Պռո Ինվեստ» ՍՊԸ-ն «ՀԳՊԱ-ԳՀԱՊԶԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.07.2019թ. թիվ 26/26-1/12458-2019 գրությամբ «Պոռ Ինվեստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ